

Ulysses

Philo

947.925

10-64

1908





ՅԻԿԿ

Յ (47.925)  
18-64

# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

**Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի**

ՎԱՆԱՅ ԱԻԱԳ ԵԿԵՂԵՅՈՒ ԿՐԾՆԱ-ՊԱՏ-  
ՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁ-  
ՆԱԺՈՂՈՎԻ 1907 և 1908 Թ.



**Թ Ի Ֆ Լ Ի Ս**

ԵԼԵԿՏՐՈՆԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑ. ՊՈԼԻՑ 7.

1908



8194

9(47.925)

Թ-64

19 AUG 2006

05 SEP 2011

# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

## Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի

ՎԱՆԱՅ ԱՒԱԳ ԵԿԵՂԵՅՈՒ ԿՐՕՆԱ-ՊԱՏ-  
ՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁ-  
ՆԱԺՈՂՈՎԻ 1907 և 1908 Թ.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԵՆԵՏԲԱՅԱՐԹ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՈԼԻՑ. 7  
1908









## ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՎԱՆԱՅ ԱԻԱԳ ԵԿԵՂԵՅՈՒ ԿՐՕՆԱ-ՊԱՏՄԱ-  
ԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈ-  
ՂՈՎԻ 1907 և 1908 թ.

Հայ հասարակութեանը յայտնի բարեգործ  
Աւետիս Դուկասեանը դեռ ևս իւր կենդանու-  
թեան ժամանակ կառուցեց Վանաց աւագ եկե-  
ղեցու Կրօնա-պատմական թանգարանի շէնքը,  
որ հանդիսաւոր կերպով բացուեց 1902 թ.  
փետրուարի 21-ին Վարդանանց տօնի օրը, Նո-  
րին Սրբութիւն ամենայն Հայոց Կաթողիկոսի  
ներկայութեամբ:

Հանգուցեալ բարերարը կամենալով թանգա-  
րանի հետ մի կենդանի և օգտակար գործ շաղ-  
կապել, հիմնեց նաև մի «գրական մրցանակա-  
բաշխութիւն», որով ցանկացաւ խրախուսել մեր  
աղքատիկ գրականութեան ասպարիզում գործող  
շնորհալի անհատներին աշխատանքը:



Թանգարանի և գրական մրցանակաբաշխութեան գործը ղեկավարելու համար հանգուցեալի առաջարկութեամբ և ամենայն Հայոց Կաթողիկոսի հաստատութեամբ, կազմուեց մի մնայուն Յանձնաժողով, որի անդամներն էին Վրաստանի և Իմերէթի Առաջնորդ Սրբազան Գէորգ Արքեպիսկոպոսը, արժ. Գիւտ ա. քահ. Աղանեանը, պ. պ. Գէորգ Եւանգուլեանը, Աբգար Յովհաննիսեանը և Աղէքսանդր Երիցեանը:

Տարաբաղաբար դեռ ևս գործը չկազմակերպուած, նոյն 1902 թ. դեկտեմբերի 5-ին Տիխիստում վախճանուեց բարերար Ա. Ղուկասեանը՝ առանց գոնէ մի անգամ մրցանակաբաշխութեան հանդիսին ներկայ լինելու հոգեկան գնարձութիւնն ունենալու: Սակայն հանգուցեալն իւր փայտայած ձեռնարկութիւնն երեսի վրայ չթողեց, այլ կանխապէս ապահովեց թէ թանգարանի և թէ գրական մրցանակաբաշխութեան գործը:

Ղուկասեանն իւր մեծագումար կտակով վաթսուն հազար (60,000) ռուբլի թողել է Ս. Էջմիածնին, իբր անձեռնմխելի գումար, որի տոկոսներով հայ ուսումնաժարաւ երիտասարդները պէտք է բարձրագոյն կրթութիւն ստանան. տասը հազար (10,000) ռուբլի Թաւրիզի հայոց դպրոցներին. քսան և հինգ հազար (25,000)

ռուբլի նոյնպէս իբր անձեռնմխելի գումար թողել է թանգարանի մնայուն Յանձնաժողովին՝ հետեւալ նպատակներն իրագործելու համար.

ա. Տասը հազար ռուբլու տոկոսները պէտք է իւրաքանչիւր տարի յատկացուին գրական մրցանակին:

բ. Հինգ հազար ռուբլու տոկոսներով պէտք է պահպանուի թանգարանը:

գ. Վեց հազար ռուբլու տոկոսները պէտք է իւրաքանչիւր տարի տրուին իբրև օժիտ երեք հայ ամուսնացող չքաւոր օրիորդներին:

դ. Չորս հազար ռուբլու տոկոսները պէտք է ամեն տարի Ապրիլի 7-ին բաշխուին հայ չքաւոր անհատներին և ընտանիքներին:

Կտակակատարներ նշանակուած էին՝ հանգուցեալի ամուսին տիկին Աննա Ղուկասեանը և պ. պ. Պօղոս Ղուկասեանն ու Մնացական Խունուցը:

Մինչ կտակակատարները կարգի կրերէին հանգուցեալի դրամական գործերը՝ նախապէս որոշուած ժամանակամիջոցում իրագործելու հանգուցեալի ցանկութիւնները, վրայ հասան Կովկասի հայութեան համար ծանր և ճակատագրական, ամենիս յայտնի օրերը, երբ նոյն իսկ բարի գործ անելն անկարելի դարձաւ մեզ համար: Պէտք էր սպասել մինչև նոր արշալոյսի բացուիլը



և բարեբաղդաբար կարճ ժամանակից յետոյ Կովկասի հայութիւնը կրկին ձեռք բերեց իւր քաղաքակրթական գործերով զբաղուելու իրաւունքը:

Դեռ հանգուցեալ Ղուկասեանի կենդանութեան ժամանակ թանգարանի մնայուն Յանձնաժողովի անդամներից երկուսը, յայտնի հասարակական գործիչներ՝ Գէորգ Եւանգուլեանը և Աղէքսանդր Երիցեանը ի Տէր հանգեան և զրանց փոխարէն Ղուկասեանի առաջարկութեամբ Վեհափառ Կաթողիկոսը հաստատեց պ. պ. Նիկողայոս Տէր Յարութիւնեանին (Յարոյին) և Իսահակ Յարութիւնեանին: Այնուհետև վախճանուեց նոյնպէս և արժանայիշատակ Աբգար Յովհաննիսեանը, որի փոխարէն կտակի գօրութեամբ Նորին Սրբութիւնը նշանակեց պ. Արշակ Բաբեանին: Մնայուն Յանձնաժողովի նախագահն է այժմ թեմիս Առաջնորդ Սրբազան Գաբեգին Արքեպիսկոպոսը:

Նորակազմ մնայուն յանձնաժողովը 1906 թ. մայիսի վերջին ստանալով կտակակատարներից՝ կտակուած գումարները, անմիջապէս գործի ձեռնարկեց և մի շարք նիստեր գումարելով՝ մշակեց երեք կանոնադրութիւն.

Ա. Վանաց աւագ եկեղեցու կրօնա-պատմական թանգարանի համար:

Բ. Ջրաւոր հայ ամուսնացող օրիորդներին օժիտ տալու համար:

Գ. Ապրիլի 7-ին շրաւոր հայ անհատներին և ընտանիքներին միանուագ նպաստ տալու համար:

Այս երեք կանոնադրութիւններն էլ հաստատուած են ի Տէր հանգուցեալ Ամենայն Հայոց Կաթողիկոսից: Իսկ Ղուկասեան մրցանակաբաշխութեան կանոնադրութիւնը մշակել է մնայուն Յանձնաժողովի նախկին կազմը և հաստատել տուել Նորին Վեհափառութեան:

Ղուկասեան մրցանակաբաշխութեան կանոնադրութեան ժա. յօդուածը մնայուն Յանձնաժողովի վրայ պարտք է դնում՝ մրցանակաբաշխութիւն տեղի շունեցած տարուայ մրցանակի գումարով հրատարակել նախնեաց ընտիր մատենադրութիւններ:

Յանձնաժողովս ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեր դասական մատենագիրներն անմատչելի են մնում գրականութեամբ պարագլոյններին և ուսանողներին նաև այդ հրատարակութիւնների թանկ գների պատճառով, որոշեց հետզհետէ հրատարակել նախնեաց ընտրելագոյն մատենագիրներն և շատ արժան գին նշանակելով՝ գոնէ գնի կողմից մատչելի դարձնել ամենքի համար:

Յանձնաժողովիս առաջին հրատարակու-



Թիւնն եղաւ «Եղիշէն»՝ ընտիր թղթով ու տպագրութեամբ և գինը նշանակուեց միմիայն 20 կոպէկ:

Երկրորդ հրատարակութիւնն է Ղազար Փարպեցու Հայոց պատմութիւնը և թուղթը, որ մամուլի տակ է և շուտով լոյս կտեսնի: Գինը նշանակուած է 30 կոպէկ:

Հայ չքաւոր օրիորդներին օժիտ տալու համար Յանձնաժողովս Արքայազան Առաջնորդի միջոցով գիմեց Տփլիսի բոլոր ծխատէր քահանաներին, որպէս զի ներկայացնեն իրենց ծխերի մէջ եղած չքաւոր և նպաստի կարօտ հայ ամուսնացող օրիորդների ցուցակները: Անցեալ տարի ներկայացուած ցուցակներից կազմուեց հարիւր տասն և եօթը (117) օրիորդի անուանացանկ:

Յանձնաժողովս անցեալ տարի որոշել էր բաժանել չքաւոր օրիորդներին և նիւթական կարօտութիւն ունեցող անհատներին ու ընտանիքներին յատկացուած գումարների երկու տարուայ տոկոսները. այդ հիման վրայ հարիւր տասն և եօթը (117) օրիորդներից վիճակով պէտք է ընտրուէին վեց օրիորդ: Վիճակահանութիւնը տեղի ունեցաւ 1907 թ. ապրիլի 5-ին, առաջնորդարանում և վիճակն ընկաւ հետեւեալ օրիորդներին. № 9 Շուշանիկ Մկրտումեանց, № 12 Հայկանուշ Քարտաշեանց, № 25 Աստղիկ Աթա-

բէգեան. № 72 Նունէ Ալլահվերդեանց, № 77 Արուսեակ Յովհաննիսեան և № 97 Մարիամ Վարդանեանց:

Այս տարուայ ներկայացրած ցուցակներից կազմուեց հարիւր ութսունուհինգ (185) օրիորդի անուանացանկ. այս ցանկից յանձնաժողովս հանեց այն 25 օրիորդների անունները, որոնց տարիքը 16-ից պակաս է և մնացած 160 օրիորդներից վիճակն ընկաւ հետեւեալ երեքին. № 60 օր. Փեշումալձեան Սօփիա, № 83 օր. Միրզախանեան Եփեմիա և № 116 օր. Դովլաթբէգեան Եղիսաբէթ:

Վերոյիշեալ օրիորդներից իւրաքանչիւրը պակի օրը կտոանայ մի հարիւր ըուրլի:

Չքաւորներին միանուագ նպաստ տալու համար անցեալ տարի դարձեալ վերոյիշեալ ձևով կազմուած հարիւր քսանեհինգ (125) չքաւորների անուանացանկը ստուգութեան ենթարկուեց Յանձնաժողովիս անդամների և գործակալ քահանայի ձեռքով և բաժանուեց նոցա 375 ըուրլի. ամեն մի ցուցակագրուած չքաւոր ստացաւ երեք ըուրլի:

Այս տարի նոյն եղանակով կազմուած անուանացանկի հարիւր չքաւորներին տրոււմ է երկուական ըուրլի — ընդամենը՝ երկու հարիւր ըուրլի:



Թանգարանի շէնքը տարաբաղդաբար դեռ  
ևս դատարկ է. Յանձնաժողովս ծրագրել է որոշ  
միջոցներ՝ կրօնա-պատմական իրեր ձեռք բերե-  
լու համար:

Չնայելով Յանձնաժողովիս գործ դրած ջան-  
քերին, անցեալ տարի մրցանակաբաշխութիւն  
տեղի չունեցաւ, որովհետև մրցանակի առաջար-  
կուած աշխատութիւններից մի քանիսն ուշ ստա-  
ցուեցան, իսկ մի քանիսի համար խնդրուած  
քննադատութիւնները չհասան:

Ամբողջ ժամանակի ընթացքում մրցանակա-  
բաշխութեան համար ստացուել են հետեւեալ 8  
աշխատութիւնները.

№ 1. Մ. Աբեղեան. Հայ ժողովրդական ա-  
ռասպելները Մ. Խորենացու Հայոց պատմութեան  
մէջ (քննադատութիւն և ուսուածք). արտատը-  
պուած «Արարատ» ամսագրից. Վաղարշապատ,  
1901 թ. էջ 598. գ. 1 ր. 50 կ.: (Այս աշխա-  
տութիւնը ստացուել է մրցանակաբաշխութեան  
համար 1903 թ.):

№ 2. Յ. Գ. Մ. Հին օրեր. պուէտ Խաչատուր  
Միսաքեան և իրեն ժամանակակից իմացականին  
վրայ հայեացքներ. 1815-էն 1891. Կ. Պօլիս.  
1907 թ. էջ 133. գ. 7<sup>1/2</sup> զրշ.:

№ 3. Հ. Կ. Տէր Սահակեան. (Մխիթա-  
րեան) Հայ կայսերք Բիւզանդիոնի. Ա. հատոր.

Մօրիկ, Վարդան, Լևոն Ե., Վասիլ Ա., Լևոն Զ.,  
Աղէքսանդր: Վենետիկ, սուրբ Ազար. 1905 թ.  
էջ. 404. գ. 2,50 ֆռ.:

Նոյնը Բ. հատոր. Պերփեռուժէն, Լեկաբէն,  
Ռոմանոս Բ., Չմշկիկ, Վասիլ Բ., Կոստանդին Ը.,  
հայ կայսրուհիներ: Վենետիկ. սուրբ Ազար.  
1905 թ. էջ 590. գ. 3 ֆռ.:

№ 4. Սէյլահան. Յովհան Վարագացի կամ  
Թահմազ-շահի արշաւանքն ի Վասպուրական. 1537  
— 1575. փոքրագիր ձեռագիր. էջ 33, որից 22 էջ  
ներածութիւն, իսկ 11 էջ բնագիր:

№ 5. Հայաստանի գոհերն ի Բաբերդ 1895 թ.  
ձեռագիր մեծագիր. էջ 60:

№ 6. Երուսաղէմի լալայեան. Նոր-Բա-  
յազէտի գաւառ կամ Գեղարքունիք. մի մասը ձե-  
ռագիր, մի մասը տպագիր՝ նկարների ժողովա-  
ծունեքով: Տպագիր էջ 202 և ձեռագիր քառա-  
ծալ տետր էջ 610. մօտ 200 գրչանկարներով  
և 14 լուսանկարներով:

№ 7. Հրաչեա Աճառեան. Հայկական  
բարբառագիրտութիւն. ձեռագիր-քառածալ տետր.  
էջ 389 և «Հայ լեզուաբանական քարտէզ»:

№ 8. Ի. Գ. «Էջմիածնի կաթողիկոսութիւ-  
նը ժԸ դարում». ձեռագիր-քարածալ տետր.  
էջ 160:

Յանձնաժողովս վերոյիշեալ աշխատութիւն-



ներից № № 4 և 5 դասւ անճամապատասխան մրցանակաբաշխութեան՝ թէ ըստ բովանդակութեան և թէ ըստ ծաւալի, իսկ մնացածները մասին ցանկանալով իմանալ մասնագիտական պատրաստութիւն ունեցող անճանց կարծիքները, որոշեց ուղարկել հետևեալ յարգելի անճանց՝ քննելու և իրենց պատճառաբանուած կարծիքը գրաւոր յայտնելու Յանճնաժողովիս:

№1. Աշխատութիւնն ուղարկուեց պրոֆ. Մառին (Պետերբուրգ) և Եր. Շահագիրզին (Նոր-Նախիջևան):

№2. Մանուկ Աբեղեանին (Էջմիածին) և Լ. Շանթին (Տփլիս):

№3. Դոկտոր Նիկ. Քարամեանին (Բագու):

№6. Պրոֆ. Գրիգոր Խալաթեանին (Մոսկուա):

№7. Լեզուաբան Լևոն Գեանջեցեանին (Արմաւիր):

№8. Աստուածաբան Գարեգին վարդ. Յովսէփեանին (Էջմիածին) և պ. Կարապետ Կոստանեանին:

Սոցանից պ. պ. պրոֆ. Մառը և Կ. Կոստանեանը հրաժարուեցին յանճն առնել քննութիւնը՝ ժամանակ չունենալու պատճառով. պ. Շանթը յանճն առաւ, բայց քննութիւն չներկայացրեց. իսկ մնացեալ անճինք ժամանակին հասցրին իրենց գրաւոր կարծիքները:

Յանճնաժողովիս անդամները մանրամասն ծանօթանալով թէ վերոյիշեալ աշխատութիւնների և թէ դրանց քննադատութիւնների հետ երկար խորհրդակցութիւնից յետոյ եկան հետեւեալ եզրակացութեան.

Մրցանակի արժանի համարել պ. Արուստիկ Լալայեանի «Նոր-Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք» և պ. Մանուկ Աբեղեանի «Հայ ժողովրդական առասպելները» աշխատութիւնները և ի նկատի ունենալով, որ առաջինը պէտք է սնվագրուի՝ տալ 300 ռ. մրցանակ, իսկ երկրորդին, որի աշխատութիւնն արդէն տպագրուած է՝ 200 ռուբլի:



«Նրիշէի» տպագրութեան հաշիւը

|   |          |
|---|----------|
| Տպուած է 1185 օրինակ, որից                    |          |
| տուած է վաճառելու կենդրոնական գրա-<br>դարանին | 200 օր-  |
| » Գուտտեմբերգ գրա-<br>դարանին                 | 300 —    |
| » նուէրներ                                    | 9 —      |
| Թանգարանում վաճառուած է                       | 140 —    |
| առ 1 ապրիլի 1908 ամի պահեստում կայ            | 536 —    |
|   | <hr/>    |
|   | 1185 օր- |



Թիֆլիսի Վանձնաժողովի մուտքի և

| ՄՈՒՏԿ                     | ԾԱԽՔ  |
|---------------------------|-------|
|                           | ն. կ. |
| Հանդ. Ա. Ղուկաս . . . . . | 44    |
| Նախորդ գանձառ . . . . .   | 50—50 |
| 0/0 25,000 ոսկ . . . . .  | 37—90 |

20000

մի  
0/0  
" Ը՞  
0/0  
0/0

1908  
1907  
1906  
1905  
1904  
1903

ՍՏԱՍԻԹԱՆԻ ԱՍ



# Հ Ա Շ ՈՒ Ե Կ Շ Ի Ռ

Թիֆլիսի Վանազ աւագ եկեղեցու կրօնա-պատմական թանգարանի մնայուն Յանձնաժողովի մուտքի և

ծախքի 1906 մայիսի 28-ից մինչև 4 ապրիլի 1908 թ.

## ՄՈՒՏՔ

|  | n.            | կ.         |
|--|---------------|------------|
| Հանգ. Ա. Ղուկասեանցի կտակակառարներին . . . . .   | 27,512        | —76        |
| Նախորդ գանձապահ Գիււ ա. քահանայից . . . . .      | 125           | —63        |
| 0/0 25,000 ոււրու 1906 թ. մայիսի 29-ից . . . . . |               |            |
| մինչ 4 հոկտ. 1907 թ. . . . .                     | 1754          | —72        |
| 0/0 25,000 ու. 1907 թ. հոկտ. 4—1908 . . . . .    |               |            |
| ապրիլ 4— . . . . .                               | 653           | —13        |
| 0/0 Ընթացիկ հաշուի 1906 թ. համար . . . . .       | 41            | —94        |
| 0/0 « » 1907 « » . . . . .                       | 70            | —72        |
| <b>գումարն է</b>                                 | <b>30,158</b> | <b>—90</b> |

## ԾԱԽՔ

|  | n.          | կ.         |
|--|-------------|------------|
| Դիւանական ծախքեր . . . . .                           | 44          |            |
| Մի պահարանի վին . . . . .                            | 50          | —50        |
| Բլանկներին տպագրութեան . . . . .                     | 37          | —90        |
| Կնիք և մանր ծախք . . . . .                           | 14          | —51        |
| Չքաւորներին բաժանած . . . . .                        | 425         |            |
| Թուղթ Ղազար Փարպեցու համար . . . . .                 | 281         | —20        |
| Ղազար Փարպեցու տպագրութեան հաշուով . . . . .         |             |            |
| վճարուած է տպարանին . . . . .                        | 250         |            |
| » » սրբագրութեան հաշուով վճարուած է . . . . .        | 40          |            |
| Կանոնադրութեան տպագրութեան համար . . . . .           | 15          |            |
| <br>   |             |            |
| Գնուեց մի գրչագիր շարական . . . . .                  | 30          |            |
| Լրագիրներում յայտարարութիւններ տպելու վարձ . . . . . | 32          | —74        |
| Մումագին հոգեհանգստեան . . . . .                     | 4           | —50        |
| Փոստի և հեռագրի ծախք . . . . .                       | 8           | —33        |
| <b>Գումարն է</b>                                     | <b>1233</b> | <b>—68</b> |

Դ ր ա մ ա ը կ ղ ա ու 4 ապրիլի 1908 թ.

|  |                  |
|--|------------------|
| 1. տոմս աւետարական բանկի № 48986 . . . . .         | 25000—           |
| 2. Ընթացիկ հաշուով նոյնտեղ գրքոյի № 3446 . . . . . | 3078—31          |
| 3. ստանալի տոկոս բանկից . . . . .                  | 653—12           |
| 4. առ ձեռն գանձապահի մօտ . . . . .                 | 59—78            |
| 5. (ստանալիք) * . . . . .                          | 134—1            |
| <b>Գումարն է</b>                                   | <b>30,158—90</b> |

\*) Նախորդ գանձապահ պ. Ա. Բահանը ստիպուած լինելով անակրն-խոյ հեռանալ քաղաքիցս՝ հաշիւներին հասցէւոր յանձնուածից առաջացած տարբերութիւնն է այս գումարը, որի մասին Յանձնաժողովս գրել է իրան և դեռ պատասխան չէ ստացել: Նախաստացել է առաջիկայ տօներին Թիֆլից գտնուած միջոցին պարզել թիւ-րիմացութիւնը:

30,158—90



# ՔՆՆԱԴԱՏՆԵՐԻ ՈՒՂԱՐԿԱԾ

ԳՐԱԽՈՐ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ


## ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂԵԱՆԻ

«ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵՆԵՐԸ»

«Հայ ժողովրդական առասպելները» գիրքը նորութիւն չէր ինձ համար. ես առաջ դեռ կարդացել էի նրան ու լաւ տպաւորութիւն տեսցել: Զգացածս և եզրակացրածս վերանորոգելու համար, վերստին կարդացի գիրքն ու համոզուեցի, որ ճիշտ է եղել տպաւորութիւնս և դա իւր թարմութիւնը դեռ չի կորցրել և չի էլ կորցնիլ, մինչև որ մի ուրիշը դուրս չգայ, որ դրա առաւելութիւններն ունենալով հանդերձ, պակասութիւնները զուրկ լինի:

Նիւթը հետաքրքրական է. հայոց վէպի մասին էպոսի մտքով դեռ մինչև ցայսօր վերջնական խօսքն ասուած-վերջացած չէ և, չնայելով այդ մասին եղած համեմատարար շատ ընդարձակ գրականութեան, տակաւին վիճելի խնդիր է մնացել՝ թէ արդեօք մենք էլ ունեցել ենք վէպ դասական ազգերի ունեցածի նմանութեամբ, թէ ոչ:

Հանգուցեալ էմինը առաջինն է եղել, որ շօշափել է այդ խնդիրը և առաջին լուրջ հետազոտութիւնն ու քննութիւնը կատարել այդ ուղղութեամբ. նա հիմք





բունելով այն մի քանի նշխարները, որ մնացել են մեր հին գրականութեան մէջ և վիպական բնաւորութիւն ունին, ենթադրել է, որ մենք էլ պէտք է ունեցած լինենք մեր վէպը նման պարսկական «Շահնամէին» և իւր բոլոր հետազոտութեանն այն բնաւորութիւնն է տուել, որ անպատճառ ապացոյց տայ Հայոց մէջ վէպի գոյութեան:

Կարծում է և կարծում ենք, որ հանգուցեալ գիտնականի հէնց այդ ձգտումը՝ անպատճառ ամեն տեղ Հայոց վէպը տեսնելու, ձգել է նրան ծայրայեղութեան մէջ այն աստիճան, որ նա Հայոց հնագոյն պատմութեան մեծագոյն մասը համարել է առնուած ամբողջապէս Հայոց վէպից:

Երկրորդ գլխաւոր հետազոտողն եղել է պ. Գր. Սալաթեանը, որ ընկել է միւս ծայրայեղութեան մէջ. նա կարծես անպատճառ իրան նպատակ է դրել հերքելու Հայոց վէպի գոյութիւնը: Եւ զրա հետևանքն այն է եղել, որ մեր հին գրականութեան մէջ պահպանուած վիպական բնաւորութիւն կրող բոլոր կտորները համարել է առած այս կամ այն գրաւոր աղբիւրներից և քմահաճոյքով վերամշակուած Սորենացու ձեռքով, որով և մեր պատմահայրը նրա գրչի տակից դուրս է եկել իբրև մի խաբերայ, մի կեղծող հեղինակ:

Երրորդ խոշոր հետազոտողն անս սոյն մեր քըննութեան ենթարկուած գրքի հեղինակն է, որ միջին ճանապարհը բունելով, հասել է եթէ ոչ բոլորովին, գոնէ հաւանականութեան շատ մօտ արդիւնքին. նա Հայոց վէպ ասելով, հասկացել է Հայոց հին առասպելները՝ որոնք գտնուում են մեր հին գրականութեան մէջ ընդ

հանրապէս և Սորենացու պատմութեան մէջ մասնաւորապէս:

Պ. Արեղեանին այդ, մեր կարծիքով ճշմարտութեան շատ մօտ, արդիւնքին հասցրել է նրա իւր հետազոտութեան մէջ բռնած շատ ուղիղ ճանապարհը՝ համեմատական եղանակը և նորով մեր հինը մեկնելու անսայթաք ուղին: Պ. Արեղեանը լաւ հասկանալով, որ հին առասպելներն իրանց ընդհանուր, էական մասերով բոլոր ազգերի մէջ միևնոյնն են և միայն տարբերում են մարմանութիւններով, համեմատական եղանակով շատ յաջող մեկնել է և Սորենացու մէջ գրաւորուած մեր առասպելաբանութիւնների բուն իմաստը, ցոյց տալով, որ նրանք իսկապէս այն նշանակութիւնը և բնաւորութիւնը չունին, որ հասկացել է էմինը, կամ որ ճիգ է թափել հերքելու Սալաթեանը, ցոյց տալով, որ նրանք էպոսի պէս դիւցազներգութեան մնացորդներ չեն, այլ սովորական առասպելաբանութիւններ, որոնք իսկապէս գոյութիւն են ունեցել և որոնց գոյութիւնը, հակառակ Սալաթեանցի ասածին, ապացուցուած է ուրիշ ազգերի մէջ նոյն առասպելների գոյութեամբ:

Պ. Արեղեանը շատ ճիշտ կերպով հասկացել է և այն, որ մեր ներկան անցեալի շարունակութիւնն է, ուրեմն և մեր ներկայ գրականութեան մէջ գոյութիւն ունեցող և վիպական բնաւորութիւն կրող նշխարները հնի շարունակութիւնն են, ասել է թէ մեր հին վէպերը ոչ այլ ինչ են եղել, եթէ ոչ մեր Սասունցի Դաւթի պէս պատմուածքներ, որոնց մէջ պատմութիւնը պատմուած է մի մասն արձակ և մի մասն երգուած է ոտանաւորով:



Ի նկատի առնելով, որ պ. Արեղեանի իւր հետազոտութեան մէջ բռնած համեմատական եղանակը ճիշտ է և ըստ ամենայնի համապատասխան ներկայումս գիտական աշխարհում ընդունուածին. ի նկատի առնելով, որ մեր նոր կեանքը հնից դեռ այնքան անբաժան է, որ շատ բան մեզանում, որոնց մասին մեր հին յիշատակարաններում տեղեկութիւն չի պահպանուել, շատ հեշտութեամբ մեկնում է նորով և որ հեղինակն ընդարձակօրէն օգտուել է այդ հանգամանքից. ի նկատի առնելով վերջապէս և այն, որ պ. Արեղեանն իւր գրուածքով շատ բան, որ մինչև ցայսօր մութ էր մեզ համար, պարզել է և հայագիտութիւնն այդ մասում մի քայլ առաջ է տարել, մենք կարծում ենք, որ զանց առնելով նրա մանր-մունր պակասութիւնները՝ աւելորդաբանութիւնները և իւր հակառակորդների դէմ վործ դրած ոչ խաղաղ տրամադրութիւնը և լեզուն, մենք կարծում ենք, որ «Հայ ժողովրդական առասպելները» աշխատանքն արժանի է խրատուսանքի, քաջալերութեան և մրցանակի:

Ե. Շահազիզ

1908 թ. Մարտ 9.

Նոր-Նախիջևան

## Հ. Կ. ՏԷՐ-ՍԱՀԱԿԵԱՆԻ

«ՀԱՅ ԿԱՅՍԵՐՔ ԲԻԻԶԱՆԴԻՈՂԻ»

Պատիւ ունեմ յայտնելու, որ Հ. Կ. Տէր-Սահակեանի երկհատոր վաստակը «Հայ կայսերք Բիւզանդիոնի» ուշի ուշով քննելուց յետոյ, հետեւալ եղբակացութեան եկայ այդ աշխատասիրութեան գիտնական արժէքի մասին:

Հայ բանասէրներից ցարդ ոչ ոք, բացի Մ. Չամչեանից, լրջօրէն չէ զբաղուել հայկական բիւզանդագիտութեամբ: Բաղմաթիւ «հայոց պատմութիւն» կոչուած երկերի մէջ կրկնուել են Չամչեանի կէս պատմական, կէս ենթադրական և աւանդական պատմուածքները բիւզանդահայերի մասին առանց պղբերների և պատմական զէպքերի քննութեանը: Հայ և օտարազգի պղբերների ուսումնասիրութեանց վրայ հիմնուած միակ ամբողջական երկն է Գէլցերի, «Ուրուագիծ բիւզանդական կայսրների պատմութեան», որ թարգմանուած է հայերէն 1903 թ.: Սակայն Գէլցերն հայերով զբաղում է անցողակի կերպով: Մի յատուկ աշխատութիւն, որ քննէր հայ ազգի պատմութիւնը բիւզանդական շրջանում և տար մեզ բիւզանդահայոց կամ արև-



մտեան հայոց պատմութիւնը, զեռ ևս գոյութիւն չունի։  
 Հ. Տէր-Սահակեանը կամեցել է իւր երկասիրութեամբ այդ թերին լրացնել և պէտք է խոստովանել, որ չէ յաջողել։

Արգոյ հեղինակը յառաջաբանի մէջ բաւական ճիշտ և որոշ առաջադրում է հայ բիւզանդագիտութեան խնդիրը, սակայն շնորհիւ պատմագիտական մեթոդի թերութեան և բոլոր հայ պատմագիրներին յատուկ հայրենասիրական մեծապանծութեան, չէ կարողանում լուծել այդ խնդիրն ինչպէս պէտք է։

Օրինակի համար եթէ քննենք հեղինակի յառաջ բերած հայ կայսրների ցանկը, դրանցից առաջինը (Մօրիկ) հայ չէր նոյն իսկ Հ. Տէր Սահակեանի քննութեան վրայ հիմնուելով (հատոր ա. ծանօթ. եր. 263—69)։ Գիտնականի վայել չէ անշուշտ արգոյ հեղինակի եզրակացութիւնը եր. 269. «Այսպէս ուրեմն կարելի է օտար պատմչաց և հայ գիտնականաց (?) երկու կուսակցութիւնը հաշտեցնել՝ զՄօրիկ հօր կողմէն հայ գնելով և մօր կողմէն հռովմայեցի»։ — Թէ ժամանակների վկայութիւնը և թէ Մօրիկի ամբողջ պատմութիւնը հակասում է այս ենթադրութեան։

Վասիլ Մակեդոնացու հայ և Արշակունի լինելու մասին եղած բոլոր վկայութիւններն անշուշտ հիմնուած են յետագայ առասպելների վրայ, որոնցից նշանաւոր է Փոտի կեղծիքն, որ տղբիւր է միւսներին համար եր. 343.։ Հայկական ծագումն անհերքելի է ըստ Գէլցերի, բայց կասկածելի Արշակունի լինելն։

Անցնելով Վասիլի հիմնած հարստութեան, նրա անմիջական ժառանգի հայ լինելը կասկածելի է, որին հետևում են այդ իսկ պատճառաւ այլ անհարազատներ։

Արգոյ հեղինակը շատ աւելի հաւատարիմ է աւանդութիւններին քան թէ պատմական ստոյգ փաստերին։

Ըստ իս հայկական բիւզանդագիտութեան պատմագրի ընտրած ձևն է գործի անյաջողութեան գլխաւոր պատճառը։

Կենսագրականները չեն կարող մի ազգի կեանքը պատկերացնել, ընդհակառակը դրանց մէջ կը կրկնուին սովորական առասպելներ և սովորական կենսական տեղեկութիւններ, որոնք լոյս չեն սփռում պատմութեան վրայ։

Մենագրական (monographie) ձևերը որևէ ժամանակի որոշ շրջանի համար շատ աւելի յարմար են և պատմութիւնը լուսարանող, քան թէ կենսագրութիւնները։ Որոշ դարու շրջանների նկարագիրներ տուել է մեզ Շլումբերգէն, որի գրչի տակ կենդանութիւն է առել բիւզանդական պատմութիւնը թ.—ժա. դարերում։

Հայր Տէր Սահակեանն իւր պատկառելի աշխատութեամբ շատ առաջ չէ անցել Չամչեանից. մինք նրա գրքից Չամչեանի պատմածներից աւելի բան չենք իմանում, մինչդեռ ինքը մեզ հայկական բիւզանդագիտութիւն է ցանկանում աւանդել։

Հայկական բիւզանդագիտութիւնն յիշաւի մեծ քայլ արած կլինէր դէպի առաջ, եթէ Հ. Տէր Սահակեանը տար մեզ որոշ դարերու բիւզանդական պատմութեան ուրուագիծն և յունահայ աշխարհի նկարագիրն, որքան այդ յայտնի է օտար և ազգային աղբիւրներից։ Երկար կանգ չառնելու համար պէտք է շեշտեմ, որ արգոյ հեղինակի երկասիրութիւնը յիշաւի տալիս



է մեզ քանի մի հայ անհատների փառքի նկարագիրն առանց դրա ծագումը բացատրելու: Ի՞նչ վիճակ ունեցաւ յունական Հայաստանը բաժանումից յետոյ, ի՞նչպէս էր կառավարոււմ, ի՞նչ վիճակ ունէր ազնուականութիւնը, ի՞նչ վիճակի մէջ էր եկեղեցին, ժողովուրդը: Ի՞նչպէս ծագեց յունահայկական զինուորութիւնը և այլն և այլն հարիւրաւոր խնդիրներ մնում են այժմ ևս մթութեան մէջ, ինչպէս և առաջ: Ի՞նչքան աւելի երախտապարտ պիտի լինէինք եթէ արգոյ հեղինակը թարգմանէր յոյն և լատին հեղինակներից հայոց վերաբերեալ բոլոր հատուածները:

Ծանօթ չլինելով «Ղուկասեան մրցանակի» բոլոր պայմաններին, կարող չեմ յայտնել թէ արժանի է սա այն մրցանակին, թէ ոչ:

Յամենայն դէպս իբրև ստոյգ աղբիւրներից քաղուած պատմական էպիզօզների ժողովածու և իբրև նորութիւն մեր աշխարհարար գրականութեան մէջ, միանգամայն և իբրև առաջին փորձ հայկական բիւզանդագիտութեան, արժանի է խրախուսանքի:

Նիկ. Բարամեան

27-ին փետր. 1908 թ.

Բագու

## ԵՐՈՒՆԻ ԼԱԼՅԵԱՆԻ

«Ն Ո Ր Բ Ա Յ Ա Չ Է Տ Ի Գ Ա Ի Ա Ռ»

Հեղինակը տալիս է ընդարձակ նկարագիր մի շատ հետաքրքրական հայ գաւառի, որը մանրամասն ուսումնասիրել է նա այլ և այլ տեսակէտից: Մանրակրկիտ և զարմանալի բարեխիղճ, ինչպէս ծանօթ է նա արդէն իր ուրիշ բաղմաթիւ երկերում, այստեղ յառաջ է գալիս նա, բացի դրանցից, մի նոր և վերին աստիճանի ուշագրաւ գիտական բաժնով—իր կատարած պեղումների թանկագին նիւթերով և նրանց նկարագրով, որոնք մեծ կարևորութիւն ունեն մեր երկրի ճնադատութեան համար.—զարմանալի նուրբ բռնագէ իրեր՝ զէնքեր, զարդեր, գործիքներ, ձիու սարք, նոյնպէս՝ կաւրասի դազաղներ կմախքներով, զանգեր խցեղէն և այլն, որոնք ներկայացրած են 222 նկարներով:

Արդէն Լ.-ցի երկասիրութեան այդ հնագիտական բաժինը, որ պտուղ է այնքան տարժան աշխատանքի, իսկապէս արժանի էր պսակուելու մրցանակով: Բայց հեղինակը զբանից զատ տալիս է նաև ժամանակակից գիտութեան պահանջների համաձայն Գեղարքունիքի—մանրամասն ընդգրութիւնը (լեռներ, ջրեր, երկրաբանա-



կան կազմութիւն, հանքեր, կլիմայ, ֆաուն, ֆլոր), ընդարձակ տեղագրութիւնը (վարչական բաժանում, գիւղերի լիակատար ստորագրութիւն, վիճակագրութիւն, քարտէզ՝ որ խոստացւում է) և ազգագրութիւնը իր բոլոր բաժիններով՝ ֆօլկլօրի կամ ժողովրդական գրականութեան հետ միասին:

Մի քանի պակասաւոր՝ երկրորդական կարևորութիւն ունեցող՝ մասերը (ընդհանուր եղրակացութիւնը պատմական բաժնի և պեղումների մասին, բնեռագիր արձանագրութիւնները, գաւառի հայ վանքերի նկարագիր, հաւատալիքներ, ձեռագիրներ) անշուշտ կը լրացուեն գրուածքի տպագրութեան միջոցին:

Իմ համեստ կարծիքն է, որ ոչ միայն պէտք է յատկացնել հեղինակին իր ներկայացրած ընդարձակ և բազմօգուտ աշխատութեան համար Դուկասեան մըըցանակը, այլ և ամեն կերպ պէտք է քաջալերել հայ ազգագրութեան և հնագիտութեան այդ հազուադէպ եռանդուն, անձնուրաց և խզմտաւոր մշակին:

Գր. Նսալաթեանց

15 փետր. 1908 թ.  
Մոսկուա, Լազարեան ձեմարան

### Յ. Գ. Մ.

«ՀԻՆ ՕՐԵՐ. ՊՈՒԷՏ ԽԱԶ. ՄԻՍԱԲԵԱՆ»

Այս գրքոյկը կենսագրութիւն է Խ. Միսաբեանի, որին չափից դուրս մեծացնում է հեղինակը: Միսաբեանը, կենսագրի բառերով ասենք, է մի «կարգէ դուրս և կարևոր անձնաւորութիւն», «հոյակապ անձն», իւր ժամանակի «միակ բանաստեղծը», որ «քննական ոգիովը շուտ ստացած է քաջընտիր գրողի հեղինակութիւն», «իւր ժամանակին ամենէն ճշմարտասէր ու ճշմարտապէս բանասէր գրիչը», «բանաստեղծ-փիլիսոփայ», մի խօսքով մի հեղինակ, որի «հսկայ եւրոպական ոճին մէջ կրնանք ըսել Մագոլէյ մը կայ, որուն անգլիական լայն լրջութեան տեղը բռնած է պոզպատի համեստ զգօնութիւն մը հայ՝ բարեխառնուած ֆրանսական կրակ զուարթամտութեամբ»: մի մարդ, որի «դասախօսական, բանասիրական ու արուեստական ազատ զբաղումները՝ կը շինեն իրեն մինչև 1848 (ուրեմն մինչև 33 տարեկան հասակը) փայլուն անուն մը: Եւ ալ կըսկսի ինքն ալ իր կարգին ունենալ իր զմայլողներն ու հետևողները», երբ «իւր անունն իբրև գրող և քերթող՝ ամենէն նշանաւորն եղած էր ի Պո-



լիս», և այլն:—Այսքան նշանաւոր ոմն է եղել Միսաքեանը, բայց անյայտ է մնացել, որովհետև իրեն ապերախտ ժամանակակիցները, «իրեն շատ մօտ ապրողներն» անգամ չեն հասկացել նրա խելքի խորութիւնը և նրա հիւսած արձակների ու ոտանաւորների մէջ չեն տեսել մտքի բարձրութիւն, գուցէ այն պատճառով,—ինչպէս բացատրում է կենսագիրը,—որ «արտակարգ մարդոց մեծութիւնը կամ բարձրութիւնն իբրև միշտ աննշմարելի եղած է անոնց, որ կապրին շատ մօտերը»: Միսաքեանն ուրեմն միաժամանակ և մի չգնահատուած մեծութիւն է, և մենք բնականօրէն պիտի սպասէինք, որ կենսագիրն ըստ արժանւոյն գնահատէր նրան, յայտնի կացուցանէր այդ անծանօթ մեծութիւնը: Նա պէտք է պարզաբանէր Միսաքեանի էութիւնը. ցոյց տար, թէ ինչով նա ազդել է իւր ժամանակակիցներին վրայ, որ ունեցել է դմայլոյններ և հետևողներ, և ինչո՞ւմ է եղել այդ հետևողութիւնը. ինչ նոր ուղղութեան ներկայացուցիչ է եղել Միսաքեանը. ինչ խոշոր մտաւոր գործունէութիւն է ունեցել. ինչ են նրա բանաստեղծական, փիլիսոփայական մտքերը. ինչ բան նա իւր շրջավայրից առել է և կամ ինքը տուել է նրան. որոնք են նրա գլխաւոր երկերը. պիտի վերլուծէր այդ երկերը, պարզէր նրանց մէջ արտայայտած գաղափարներն ու զգացումները, որոշէր նրանց բանաստեղծական արուեստը. մի խօսքով հեղինակը պէտք է մեզ համար պարզ և հասկանալի անէր, թէ ինչով Պուէտ Միսաքեանը «առաքինացել» և «զլել» գերազանցել է իւր ժամանակակիցներին: Բայց այս ամենն իդուր կորոնենք այս աշխատութեան մէջ:

Հեղինակն ինչքան էլ Միսաքեանի «բարեկամն ու

սիրողն է եղած», թէպէտ և նրան «ոչ տիրապէս աշակերտած ոչ ալ տիրապէս հետևող մը եղած իր գրականութեանց մէջ») ակամայ կարծես այնպիսի կենսագրութիւն է գրում, որի մէջ հակառակ իւր շոտյաժ գովեստներին՝ դժբախտ Միսաքեանը հանդիսանում է մի չնչնութիւն, որով և այս կենսագրութիւնը չի համուծ իւր նպատակին, այն է՝ որոշել մի «նոյակապ» ու «փայլուն անուն» և հետևողներ ունեցող գրական անհատի դիրքը իւր երկերով: Ընթերցողը մնում է անել գրութեան մէջ. չի իմանում թէ որին հաւատայ. արդեօք իրօք Միսաքեանը մի մեծ հեղինակ է եղել, ինչպէս լսի խօսքերով խոշորացնում է նրան իւր կենսագիրը. թէ՞ նա մի առանձին արժէք չէ ունեցել, ինչպիսի տպաւորութիւն ստանում եմ ես այս գրքոյկը կրկին ու կրկին կարդալուց: Եւ իսկապէս. ինչպէս է պատկերանում Միսաքեանն այս աշխատութեան մէջ:

«Պուէտ» յորջորջուել է քսան տարեկան հասակում ոչ թէ նրա համար, որ բանաստեղծ է, այլ որովհետև ոտանաւորներ է գրում և որ այդպէս է ցանկացել մի ազայ «այնպիսի ատեն մը, ուր ամեն տաղաչափ բանաստեղծ կըսուէր, և քանի մը լայնատարած բառեր, ածականներու կաղամբի ճոխութիւն, համեմուած աստուածաբանական պիտակ ձևերով՝ բաւական էին բանաստեղծական գրոջմը տալու կարգ մը անլի գրուածներու»: Բայց Միսաքեանի կենսագիրն ասում է մեզ թէ իւր «երիտասարդ քերթողն» այդպիսի բանաստեղծ չէ եղել. այլ նա առանց գիտնալու եւրոպական լիզու մը իր սկզբնական տաղերուն տուել է «այն դիւրագարձ ոլորքն և իմաստներու ուժգին խտութիւնն և ընտրութիւնն, որ այսօր ալ կրնան ազդել նոր միտ-



քերու վրայ»։ Հաւատմանք այս խօսքերին. կենսագիրը ոչ մի օրինակ չի բերում։ Ընդհակառակն առաջին ծանօթ տաղը որ բերում է, է մի այրածաւար, այսինքն վաթսուոն հատ 15-վանկանի երկայն տողեր, կարճ էք երևակայել, միմիայն այնպիսի բառերով գրուած, որոնք բացի այդ տառից ոչ մի ուրիշ ձայնաւոր չունենան։ Եւ այս ոտանաւորը, բառարանից հաւաքած կուտակութիւնը՝ գրաբար հորովումով և խոնարհումով, արժանացել է իւր ժամանակին... մրցանակի։ Ահա թէ ինչի վրայ է շինուած եղել Միսաքեանի համբաւը մինչև 1848 թուականը, այլ և մինչև 1858 թ., որովհետև նա մինչև 1848 թ. ոչինչ չէ հրատարակած, իսկ «մինչև 1858 թուականը ընդարձակ գրութենէ մը զատ՝ բան մը չէ հրատարակած Մասիսի մէջ», երևի և ոչ մի ուրիշ տեղ. կամ, ինչպէս ուրիշ անգամ գրում է կենսագիրը. «մինչև 1858՝ տասը տարուայ մէջ Եպիսոփայեանի և Կուրաց դատարարակումնէն զատ բան մը չէ հրատարակած Փարիզէն»։ Միսաքեանի փառքն ուրեմն այն է եղել, որ իմացել է գրաբար, եղել է այս ու այն հարստի որդոց համար տանու վարժապետ. ժամանակի սովորութեամբ, ինչպէս հ. Արսէն Բագրատունին, գրել է այդ աղաների և պատրիարքների համար յանգաւոր, միայն յանգաւոր ոտանաւոր ուղերձներ, շոյել է նրանց սիրտն իւր տաղերով, մինչև որ 1848 թուին այդ աղաներից մէկն այդ «պուէտի» ձեռով իւր որդիներին Փարիզ է ուղարկել ուսման, և ինքը Միսաքեանն էլ այնուհետև 24—25 տարի Փարիզում է մնացել. պարապելով լուսանկարչութեամբ։ Այս է ահա Միսաքեանը մինչև 1848 թ., երբ «փայլուն անուն» և «հեռուողներ» է ունեցել։ Դրա վրայ պիտի աւելացնել և այն, որ նա

մի ժամանակ սարկաւազ է եղել և իւր եպիսկոպոսից տղայաբար վրէժ է առել՝ քարոզի ժամանակ կանթեղը շուռ տալով նրա վրայ, և ինքն իսկ այս դիպուածը, իբրև մի երևելի բան, գրի է առել «կոկիկ մանրավէպի մը մէջ՝ շատ համեղ ոճով մը», ասում է մեզ իր կենսագիրը. ապա և այն, որ 1838 թ. Սկիւտարի ձեմարանում դասատու է դառնում հայկաբանութեան, բայց շատ կարճ ժամանակից յետոյ՝ իւր նախանձոտ բնաւորութեամբ դպրոցական անկարգութիւն և խռովութիւն է յարուցանում և հեռացում դպրոցից։

Իսկ ինչ մտաւոր գործունէութիւն է ցոյց տալիս Միսաքեանը Փարիզում ամբողջ 25 տարուայ ընթացքում, իւր կեանքի ամենալաւ ժամանակը, 33—58 տարեկան հասակում։ Նա ապրում է։ Այնտեղից նա մի երեք չորս տարի միայն 1858—1860, 1861 թղթակցում, աշխատակցում է Մասիս լրագրին և ապա լուծւում է։ Կենսագիրը յիշատակում է նրա գրածներից մի քանի անուններ, մի քանի «բանաքննականներ», առանց պարզելու մեղ, թէ դրանք ինչ բաներ են, թէպէտև նոյն իսկ մի քանի հատուածներ է մէջ բերում։ Եւ ինչպէս երևում է, այդ անելը հեշտ չէ եղել. որովհետև Միսաքեանը մի բանասէր է, որի «հասուն», «ամենէն փայլուն» յօդուածները նուիրուած են զանազան լրագրական վէճերի, և այդ յօդուածների համար Յ. Փ. Մ. անգամ գրում է թէ «չունին տևական յատակ մը իբրև գիտնական կամ մատենագրական յիշատակներ»։ Եւ ահա չնայելով դրան՝ խմբագիրներն ու ուղնում են այդ փարիզեան աշխատակցին, եւրոպացի մարդուն, որովհետև հանաք չէ, քսան և հինգ տարի Փարիզում է ապրում. և երբ վերադառնում է հայրենիք, յաղթա-



կան մուտք է գործում Պոլիս: Բայց խոհեմաբար լուում է և չի գրում լրագիրներում, ինչքան թախանձում են. և ապա մի երկու տարի յետոյ երբ մի երկու բան գրում է, ծաղր ու ծանակի առարկայ է դառնում, և Պարոնեանը նրան իւր Աղգային ջոջերի շարքը դասում: Նա խոհեմաբար չի հրատարակում իւր «սէսպիսաքանդ վէպերն և մեսրոպեան տաղերն», թէպէտև դրա համար իւր բարեկամները փող էլ են ժողովում և տալիս իրեն: Վարժապետ է կարգում օր ծերութեան մի դպրոցում և բնականաբար անպէտք հանդիսանում: Ապա մեկուսացած ապրում է մինչև որ մեռնում է խեղճ ու թշուառ: Մեռնելուց մի քանի ժամ առաջ ճակատը շփելով ասում է. «Հոս, հոս մարգարիտի պէս շարուած են գրուելիք և ըսուելիք այնպիսի բաներ, որ ոչ ըսուած են և ոչ ալ պիտի ըսուեն. ելնեմ նէ պիտի սրբագրեմ բոլոր գրածներս»: Նա թողնում է ձեռագիրների մի կոյտ, «երկու երեք հազար էջի մօտ ձեռագիրներու կտրատ - կտրատ շեղջեր», որոնք այժմ պահուում են Սկիւտարի Ս. Սաշ վարժարանի թանգարանում:

Այս է ահա պուէտ Միսաքեանի մեծութիւնը. մի մարդ, որ «չէ կրցած զլուխ կենալ ոչ մէկ մեծ գործի և չէ ձգած գրեթէ զլուխ գործոց»: Մի բանաստեղծ, որ Փենելոնի *Syrisar* «ազատ յարասութեամբ» գրաբար ոտանաւորի է վերածած. որի երկերից նրա կենսագիրը բերել է միայն իբրև ընտիր նմուշ Հիւգոյից թարգմանած մի քանի տող, *Լաֆոնտէնի ձգրուն* ու մրջիւնը, և վերջապէս մի ինքնուրոյն բանաստեղծութիւն՝ Ե. Հիւրմիւզի լուսանկարի տակ գրած մի ոտանաւոր, բոլորը գրաբար: Մենք չենք իմանում նոյն իսկ

թէ այդ բանաստեղծը աշխարհաբար ոտանաւոր էլ գրէ՞լ է թէ ոչ:

Գրքոյկիս հեղինակը նեղութիւն անգամ չի կրել Միսաքեանի ձեռագիրներն ուսումնասիրել, թէպէտև այդ հնարաւոր է եղել նրան. «Տակարար բացառիկ ձգանց» այս արդիւնքի մէջ նա բաւականանում է միայն գրելով թէ Միսաքեանն «անաւարտ ձգեց գրեթէ իր ամեն ձեռագիրները», կամ թէ ձեռագիրները այդ «անյար կցկտուր կոյտի մէջէն արիադնեան թիւով ալ չես կրնար ելնել»: Չեմ կարծում թէ ինչքան էլ խառն ու խուռն լինէին այդ ձեռագիրները, կարելի չլինէր նրանց միջից ընտրել մի քանի գեղեցիկ բանաստեղծութիւններ և մէջ բերել Միսաքեան բանաստեղծի մասին գաղափար տալու համար: Գոնէ իւր յիշած ու գոված ձեռագիրներից Սոփիան, Կաղ սատանաներն և *Հայկանուշից ժողով աշխատութիւնների մասին ծանօթութիւն* տար: Հեղինակի համար այդ անհնարին է եղել, թէպէտ և այդ անհնարինը «Անահաի» խմբագրի համար շատ ժուար չէ եղել: Սոփիան այս գրքոյկի հրատարակութիւնից երեք տարի առաջ (1904 թ.) տպագրուած է «Անահաի» մէջ, որ և անյայտ է մնացած Յ. Գ. Մ.-ին: Ձեռագիրներն ուսումնասիրելը շատ կարևոր է, որովհետև Միսաքեանի բոլոր բանաստեղծական փառքը, եթէ պիտի ունենայ, այդ ձեռագիրներից պիտի դուրս գայ, և ոչ այն տնարժէք հատուածներից ու ոտանաւորներից որ բերում է նրա կենսագիրը, գուցէ և չկարողանալով յաջող ընտրութիւն անել: Միսաքեանն այն ձևով, ինչպէս հանդիսանում է այս աշխատութեան մէջ, բաւական անյաջող նիւթ է Կ. Պոլսի գրեթէ ամբողջ 19-րդ դարու մտաւոր կիսան-



քի նկարագրին կեդրոն դառնալու համար: Այդտեղ բա-  
ւական չէ միայն երկար ապրած լինել, այլ հարկաւոր  
է բեղմնաւոր միտք և հասարակական շարժման հետ  
յառաջ խաղացող ոգի. իսկ Միսաքեանն այդպիսինե-  
րից չէ եղել: Այս պատճառով այս աշխատութեան մէջ  
«ժամանակակից իմացականին վրայ հայեացները» շատ  
հարեանցի են. դրանք, ինչպէս հեղինակն է ասում,  
«սուղ արտուղի ակնարկներ» են Կ. Պոլսի դպրոցական  
գրութեան մասին, որ մի առանձին նոր տեղեկութիւն  
չեն բերում. կամ թէ աշակերտական ու բարեկամական  
յիշողութիւններ ու տպաւորութիւններ են: Կան և մի  
